

ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԱԶԳԱՅԻՆ — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ — ԳԻՏԱԿԱՆ — ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԹԵՐԹ

ԲՅԱԸ-Թ

ՀԱՏՈՐ

ՀԷ

1919

ՕԳՈՍՏՈՍ

ԹԻՒ 8

Ս.
ՂԱԶԱՐ

ՕԳՏԱԿԱՐԸ ԱՍԵԼ ՊԱՐՏՔ Է, ՈՉ ՎԻՐԱԿՈՐԵԼ

ՀԱՅ ազգին պատգամաւորներն հաւաքուելով Պարիսու մէջ, հասարակաց հաւանութեամբ վերակազմեցին Հայկական Նոր Պատուիրակութիւնն, յանձնելով անոնց Հայկական դատի պաշտպանութիւնն, Միացեալ ազատ եւ անկախ Հայաստանի հաւար:

Այդ միութեան նպատակն էր բաժնուած Հայաստանի մասունքներն ազատել տիրապետողներու ձեռքէն եւ կազմել մեր ինն Հայաստան աշխարհը իւր բնական եւ քաղաքական սահմաններու մէջ: Կը հետեւի բնականապէս որ երկու հարց կ'որ լուծուի. ա. Տաճկաստանի վեց Վիլայեթներն անջատել թուրքի իրաւաստութենէն. բ. ընդունել ընդ տալ խաղաղութեան ժողովին Հայկեան Հանրապետութեան գոյութիւնն. որով այս երկու հաստուածներն խաղաղութեան ժողովի դրած սկզբունքներու համաձայն, պէտք էր միանային եւ կազմէին մէկ ազատ եւ անկախ Հայաստան մը: Այս աշխատութիւնն՝ երկու որոշ ծրագրով պէտք

էր ուղղուէր առ մի եւ նոյն նպատակն, մէկն զմիւսն լրացնելով. արդ մենք կարծենք որ Հայկական պատուիրակութեան միտքն հասկացած ըլլանք:

Սակայն «Վերածնունդ»ի 26 Յունիս ամսի խմբագրականն կարծես առաջին փորձը կ'ընէ խրամատելու այդ միութեան գործը: Նորա հաճոյ թուած չէ գբաղիլ «տաճկահայոց հարցով». սխալն այդ բանի մէջն է. եւ մեծագոյն սխալն ալ այն է որ անվայել լեզու մը կը գործածէ վսեմ. իշխանի դէմ. անձնական կրքի ցաւալի երեւոյթ մ'է:

Եթէ Պատուիրակութիւնն, ինչպէս որ չենք տարակուսիր, անկեղծօրէն նուիրուած է, բոլոր ի սփռուս եղած Հայ ազգի զաւակները ժողովելու մայր երկրի հողի վրայ, եւ կազմելու Մեծ Հայաստանն, այն ատեն, գրիչն ի զուր կ'արծէ դատապետել զՆուպար իշխանն միայն, զի իւր մեղադրանքներն ուղղուած են հաւասարապէս թէ Նոր պատուիրակութեան միւս անդամներուն, եւ թէ պատգամաւորական խմբին, որոնք յա-

Նու՛ն ազգի՛ն ընտրեցին այդ օրինական մարմինն, որուն արժանի համարեցան Գահերէց լինելու գնուպար իշխանն:

Պարիսո՛ւ ժողովն սխալած չէր Նուպար իշխանի ձեռնամուտութեան այդպիսի մեծ գործի մը ղեկավար լինելուն: Վասն զի ազգիս նախընտաց մատուցած ծառայութիւնքն էին նորա արժանիքն գրաւելու այն անոռը, որուն նախապէս սահմաններ էր վեհապառկանոցի կոմս: Համոզուելու համար, յարգելի թերթին կ'առաջարկէինք աչքէ անցնել առաջին՝ վսեմ. իշխանի նամակն առ Պ. Միք. Վարանդեան, որ ուշադրութեան արժանի է. երկրորդ՝ Հանրապետութեան տաղանդաւոր նիսնադիրներու օրգան «Դիօշակի» 1914ի սկիզբն: Գրածն Պ. Ն. իշխանի մասին. «Բարեբաղդաբար, Պօղոս Նուպարը յայտնւեց մի խոշոր, եւ տաղանդաւոր գործիչ եւ մէն-մինակ արեց անելին, քան ամբողջ հայ բուժուագիւն: Մէկ ու կէս տարւան իր անդուլ, հայրենասէր գործնեւութեամբ, նա գրաւեց մի էջ հայ նորագոյն պատմութեան մէջ: Տեղը եւ ժամանակը չէ ի յայտ բերելու այդ գործնեւութեան մասնաւորութիւնը, յիշատակելու այն խոչնդը, որ Նուպար հարկեց եւրոպական մի քանի դակիւններուով, իր ԿԱՐՈՂ ՌԵ ՀԱՄԱԶԻԶ ՏՐԱՄԱՐԱՆՈՒԹԵԱՄԲ՝ հայկական խնդրի կանոնաւոր ընծաքը ապահովելու համար»: Պիտի ասեն որ այս անցեալի համար լաւ է: Հապա ներկայիս:

Ներկայիս համար մատնանշենք «Կոչնակ»ն, որ նոյն այս անցեալ յունիսի (դիտելի է զուգադիպութիւնն) համարի մէջ կը գրէ.

Ն. Վ. Պօղոս Նուպար,

Նախ. Ազգային Պատուիրակութեան.

«Հայ Աւետ. Միութիւնը Ամերիկայի իր 18րդ տարեկան ժողովին մէջ, ի Փրովնտէնս, խորին երախտագիտութիւն կը յայտնէ ձեր վսեմութեան եւ Պատուիրակութեանը անդամներուն՝ այն անխնջ աշխատութեան եւ արդիւնաւոր ծառայութեան համար զոր մատուցած էք Ազգին արդար պահանջները յաջողապէս ներկա-

յացնելով մեծ ազգերու ներկայացուցիչներուն: Միութիւնս կը մտղծէ լիագոյն յաջողութիւն ձեր եւ ձեր նախագահութեան ներքեւ գոնուող Պատուիրակութեան քանքերուն»:

Որով կրնանք վստահ լինել թէ ներկայ պարագաներու մէջ ալ, այդ անձնաւորութիւնն նոյն կշռադատ մտքով եւ հայի սրտով կը խորնի եւ կը գործէ Ազգիս բարեոյն համար, պաշտպանելով *Համադիտարմարանութեամբ* սնորհ կենսական շահերն, արդար պահանջներն՝ ուր եւ ինչպէս հարկն է:

* *

Երկու խօսք ալ մեր կողմէն, առանց քաղաքագէտ լինելու յատկաւորութեան, խրմբազրութեան շօշափած հարցերու մասին: Նախ եւ առաջ Հայկական վեց *Վիլայէթներու* հարցն դեռ իւր կարեւորութիւնն ու նշանակութիւնն կորսնցուցած չլիսի ըլլայ, ինչպէս Թուրքի կարծել յօդուածագիրն. այդ հարցը սերտ կապ ունի Թուրքաստանի գործերու հետ. քանի անոնց վերջնական վիճակն որոշուած չէ, դեռ կան աչ սեղանի վրայ կը գտնուին 1914էն մնացած թղթերն. ուստի խոհեմութիւն չէ բարձի թողի ընել այդ հարցը. որով իրաւացի է այն քանքերն որ այդ ուղղութեամբ կը կատարուին: Զմոռնանք որ 1916ի Լոմբարդի այլ եւ այլ դաշնագիրներն իրենց դառն պտղի համար հաշակել տուին Իտալիոյ եւ քիչ մ'ալ մեզ Հայոցս: Գաղղիոյ ակտրժակն շատ բաց էր կիլիկիոյ եւ Հայոց չորս գաւառներու համար... Նոյն տարւոյ դաշնագրով Ռուսին կը շնորհուէր Կ. Պօլիս եւ Գեղեթի ԴԱՄՆ ՄԻ ՄԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԷ... եւ թէ տակաւին Ռուսաստանի թոհրոն չէ պարզուած, մենք անակախալներու կրնանք հանդիպիլ: Հետեւապէս երբ Դաշնակիցք խաղաղութեան ժողովի մէջ Տասնկատանի ապագայ վիճակն որոշեն, անորաժեշտ է առանձնապէս պաշտպանել *վեց Վիլայէթներու* անկախութիւնն որպէս զի կարելի լինի միացնել Արարատեան Հանրապետութեան հետ, իբրեւ

հետեւեալնք վիլսոնի դրած սկզբունքին, որ ճնշուած ազգերն իրենք պէտք է որոշեն իրենց վիճակը:

Ուստի անցաւ՝ այլ զուգընթացաբար պէտք է պաշտպանուին դիւանագիտական ճանապարհներով երկու հարցերն ալ, իբրեւ լրացուցիչ մասեր Միացեալ անկախ Հայաստանի:

Ռուսաստանն ուշ թէ շուտ պիտի վերակազմուի. ինչ ոճի վարչութիւն գայ, նա իւր աչքերն կ'ովկասէն չի վերցնէր: Սակայն Ազգերու Ընկերակցութիւնն, դաշնակիցներու երաշխաւորութիւնն պիտի պահէ մեզի համար Արարտեան Հանրապետութիւնն:

Եթէ կողմնակի անձինք կը հասկանան կ'ըմբռնեն Հայկական Հանրապետութեան մեծ եւ անուրանալի իրականութիւնն, անոր անժխտելի իրաւունքներն պահպանելու, իւր գոյութիւնը եւ արդար պահանջները հասնչեցնել տալու իւր սղաւտ եւ անկախ տիրապետութիւնը վերածնեալ Հայաստանի վրայ, ինքն վսեմ. իշխանը միթէ չի հասկանար սոյսքան բացայայտ Ֆշմարտութիւն:

Թէ պէտ Հայկական Հանրապետութեան գրաւած գետինն, երբեմն կը գտնուէր Ռուսաց տիրապետութեան տակ, սակայն 1917ին թողին լըին այդ երկիրն. Ժողովուրդն մնալով իբրեւ անհովիւ ոչխար, Թուրք գայլերուն անաշխատ հարակ պիտի դառնային՝ եմէ մատնուած եւ դաւաճանուած Հայը, ինքնապաշտպանութեան համար գէնք չվերցնէր, եւ իւր սեփական տունն եւ բնիկ աշխարհը չսգատէր Թուրքերու ձեռքէն եւ շարդերէն: Հայը իւր կարմիր արիւնով գնեց այդ հողը Թուրք-Գերման բարբարոսներէն:

Աւանց անիրաւելու նախկին կայսերական իշխանութեան դէմ, իրաւապէս եւ արդարապէս բարձրացուցին ազատութեան

եռագունեան դրօշն Արարտեան դաշտի վերայ: Ահա թէ յորում է Հայ ազգի արդար եւ օրինական պահանջն Եւրոպական Դաշնակից Պետութիւններէն, որ ճանաչեն եւ վաւերացնեն Հայկական Հանրապետութեան անկախ հաստատութիւնը. որուն՝ որչափ գիտենք հաւատարմ աղբիւրէ, չի պիտի հաւատակի վերակազմուելիք Մեծ Ռուսաստանն:

Տահկաստունն ալ ըստ իւր կարգին պիտի ամփոփուի Անատոլի մէջ: Նոյն իսկ Եւրոպական հովանաւորութեան տակ. մեզ հարկաւոր է ուրեմն այժմէն ապահովել վեց գաւառներու սպազան – Հարց մը, որ եւրոպայի դիւանագէտներու համար կը համարուի անցաւ Հայկական Հանրապետութիւնէն, եւ անոնք անշուշտ մեր զգացմունքներով չեն առաջնորդուի վճիռներուն մէջ, իրենց շահերն գերադաս են՝ քան հարիւր այնպիսի գաւառներ: Մեզ կը մնայ վաստկել հասարակական բարեացակամութիւնն, սիրաշահել Խաղաղութեան Ժողովի անդամներն: Ասոր համար Պարիսու Հայկական Պատուիրակութիւնն ունի իւր մէջն երկու մեծ հատուածի լաւագոյն ուժերն, պատկառելի իրենց բազմամեայ փորձառութեամբ, հոյակապ գործերով, ամեն հարցերու մէջ ցոյց տուած լուսամիտ, աշխուրջ դատողութեամբ, անշահասէր, անձնատէր աշխատութեամբ, դիմագրաւելով ամենայն դժուարութեանց ի սէր ազգի եւ Հայրենեաց: Եթէ մեր Մեծերն կրտսերագունից խորհրդին կարօտին, ինչու չէ, օգնենք որքան կարելի է, բայց առանց արգելք հանդիսանալու անոնց գործին, որոնք մեզէն աւելի բարձր դիրքի վրայ գտնուելով աւելի լաւ եւ աւելի հեռունք կը տեսնեն:

ԻՄԲ.

